եւ փիլոնքս առած է և մեք տէր տղայոց. եկ և տա՛ր զհուճէթն նոցա որ մեք ազատիմք։ Հազիւ եւ ճորով եւ այլ շատ բան անցեալ ի մէջ՝ բերին զԹէրզին, որ եկն անկաւ առաջի Եղիազար վարդապետին Մեղա՛յ ասելով և ետ զհիւճէթն։ Այս այն Թէրզին է որ ժողովուրդն բռնեցին զՄուղնեցին եւ սա պատասխանի տայ ժողովրդեանն, որ ժողովուրդն ի վերայ սորա դարձեալ՝ յոյժ գանեցին զսա, եւ պօստանճիպաշուն Թերզին է որ Մուղնեցին պիտի պատրիգ առնել տայր։

Դշի օրս աւագ (2 Ապրէլ). ևս և ծաղկարար Մարկոսն եկաւ Մեղա՛յ ասելով Եղիազար վարդապետին և զուղիղն խոստովանեցաւ թէ այն բանադրեալքն[1]) փրկին, քանզի եւս էր սա վերակացու Մուղնեցոյն յամենայն գործս առաջի եղբօր կաթողիկոսին և Խոճա Տաւուտին եւ այլ ամենայն մեծամեծաց քաղաքիս, եւ զդրամ տալն մի կախարդի տաճկի միոյ Դճ ղուռուշ՝ թէ կախարդեսցեն զեղիազար վարդապետն որ մեռանի ի Ի օրն։

Եշի օրս (3 Ապրէլ) զաւուր խորհուրդն ասաց Վարդապետն։ Ի տեղ գնաց վասն Երուսաղէմայ եւ ծանօթացաւ մուֆտուն։ Եւ երեկոյիս գնացաք ի ժամ. ոչ էր անդ Վարդապետն և աւրհնեցին զժամն, և եղեն թէ լանանք զոտս, եւ Վարդապետն եկն եւ նստաւ զի զոտս լասցէ, եւ բազմամբոխէն կոտորեցին զաթոռն. Վարդապետն լանար եւ Տէր Ոհանէս աբեղան իւր սրբէր և դարձեալ ինքն օծանէր։ Եւ երեկոյացաւ եւ ոչ լինէր վերջ արանցն, եւ բազումք գնային եւ ոչ լանալ ետուն, զի հեռաստանէ եկեալք էին։ Եւ յորժամ ելաք ի ժամուն՝ կանչեց զեաթսուն, եւ ընդ Մղտեսուն հետ ի տունն գնացաք և սակաւ ինչ հանգաք եւ ելաք գնալ ի ժամ, եւ աւրհնեցին զժամն եւ

1) բանադրեալն.